**Գործ թիվ ԵԴ2/3693/02/26**

**ՎՃԻՌ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

**Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը(այսուհետ՝ դատարան),նախագահությամբ Դատավոր՝ Տիգրան Գրիգորյանի**

---

**29 ապրիլի 2026թ. ք. Երևան**

**Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան)**

**նախագահությամբ դատավոր՝ Տիգրան Գրիգորյանի**

Քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Բերմա» ՓԲԸ-ի (գրանցման համար՝ 77.120.00462, ՀՎՀՀ՝ 03800108, հասցե՝ ՀՀ, Արարատ, Մասիս, Արդյունաբերական Հանգույց, Արտադրական, տուն 9) ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի (այսուհետ նաև՝ Պատասխանող) (ՀՎՀՀ 04240737 , պետական գրանցման համար 52.181.1225368, հասցե՝ ՀՀ, Արարատ, Արտաշատ, Օգոստոսի 23 փ., շենք 62)՝ Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի և բնակավայրերի փողոցների նորոգման ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2026 թվականի «փետրվարի» «13» «1» որոշմամբ հայտարարված թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-26/28» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 4 արձանագրությամբ կայացված «ԲԵՐՄԱ» ՓԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու), որպես հետևանք՝ Արտաշատի համայնքապետարանից հօգուտ «Բերմա» ՓԲԸ-ի՝ թիվ 720/27, 721/27 և 722/27 բանկային երաշխիքներով սահմանված հայտի ապահովում հանդիսացող 26.042.850 ՀՀ դրամ՝ որպես սույն ընթացակարգի

շրջանակներում Հայցվորից գանձված գումար վերադարձնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

_

**1. Գործի դատավարական նախապատմությունը.**

Հայցվոր «Բերմա» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Լ.Օհանյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի՝ Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի և բնակավայրերի փողոցների նորոգման ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2026 թվականի «փետրվարի» «13» «1» որոշմամբ հայտարարված թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-26/28» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 4 արձանագրությամբ կայացված «ԲԵՐՄԱ» ՓԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը անվավեր ճանաչել (վերացնել) պահանջի մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգում մակագրվել է Դատավոր Տ.Գրիգորյանին 03.04.2026թ. ժամը 21:14-ին:

Դատարանը 08.04.2026թ. որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու, ապացույց պահանջելու և 29.04.2026թ. եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին: Դատարանի նույն օրվա մեկ այլ որոշմամբ՝ հայցի ապահովման վերաբերյալ հայցվոր ընկերության ներկայացուցչի միջնորդությունը մերժվել է:

Դատարանը 14.04.2026թ. որոշում է կայացրել գնման գործընթացի կասեցումը վերացնելու միջնորդությունը մերժելու մասին:

Դատարանը 23.04.2026թ. որոշում է կայացրել հայցի հիմքի և առարկայի փոփոխություն կատարելու միջնորդությունը բավարարելու մասին:

**2. Հայցվորի դիրքորոշման հակիրճ բովանդակությունը.**

Դիմելով Դատարան՝ հայցվոր կողմը նշել է, որ Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի և բնակավայրերի փողոցների նորոգման ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2026 թվականի «փետրվարի» «13» «1» որոշմամբ հայտարարվել է թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-26/28» ծածկագրով գնման ընթացակարգը (այսուհետ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգին հայտ է ներկայացրել նաև «ԲԵՐՄԱ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Մասնակից կա՛մ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) կողմից 24.03.2026 թվականին կազմված թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԲԵՐՄԱ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է առնվազն 2-րդ դաս շինարարության իրականացում ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելորացիա) ներդիրը: Հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և մեկ աշխատանքային օր տրամադրել մասնակցին՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Հանձնաժողովի կողմից 27.03.2026թ. կազմված թիվ 4 արձանագրության համաձայն Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Ընկերությունը 24.03.2026 թվականին չի ստացել Հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը և/կամ այդ արձանագրությամբ մատնանշված անհամապատասխանությունների մասին ծանուցումը:

Հանձնաժողովի կողմից 27.03.2026թ. կազմված թիվ 4 արձանագրությունը 28.03.2026թ. չի հրապարակվել տեղեկագրում:

Այնուհետև վկայակոչելով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 7-րդ, 34-րդ, 32-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, հոդվածները նշել է, որ՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) կողմից 24.03.2026թ. կազմված թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԲԵՐՄԱ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է առնվազն 2-րդ դաս շինարարության իրականացում ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելորացիա) ներդիրը: Հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և մեկ աշխատանքային օր տրամադրել մասնակցին՝ անհամապատասխանությունը շտկելու համար:

Հանձնաժողովի կողմից 27.03.2026թ. կազմված թիվ 4 արձանագրության համաձայն Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Ընկերությունը 24.03.2026թ. չի ստացել Հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը և/կամ այդ արձանագրությամբ մատնանշված անհամապատասխանությունների մասին ծանուցումը:

Հանձնաժողովի կողմից 27.03.2026թ. կազմված թիվ 4 արձանագրությունը 28.03.2026 թվականին չի հրապարակվել տեղեկագրում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ԲԵՐՄԱ» ՓԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անհիմն է և ոչ

իրավաչափ:

Հրավերի 8.18 կետի համաձայն՝ Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Սույն պարագայում Մասնակիցը շտկման մասին ծանուցում չի ստացել, հետևաբար զրկված է եղել շտկում ներկայացնելու հնարավորությունից: Վերոգրյալից հետևում է, որ Հանձնաժողովը խախտել է մասնակցի՝ հավասար և ոչ խտրական հիմունքներով գնման գործընթացին մասնակցելու իրավունքը:

Սույն պարագայում Մասնակցի հայտում անհամապատասխանություններ հայտնաբերելուց հետո՝ խախտելով Կարգի 41-րդ կետի դրույթները, Հանձնաժողովը նույն օրը Համակարգի միջոցով չի ծանուցել մասնակցին այդ մասին, ապա թիվ 4 արձանագրությամբ անբավարար է գնահատել և մերժել է այն, այնուհետև՝ խախտելով Կարգի 43-րդ կետի դրույթները, թիվ 4 արձանագրությունը՝ դրա կայացման հաջորդ օրը չի հրապարակել Տեղեկագրում:

Այնուհետև վկայակոչելով՝ ՀՀ Սահմանադրության 59-րդ, 78-րդ հոդվածները խնդրել է՝ անվավեր ճանաչել (վերացնել) Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի և բնակավայրերի փողոցների նորոգման ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2026 թվականի «փետրվարի» «13» «1» որոշմամբ հայտարարված թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-26 /28» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 4 արձանագրությամբ կայացված «ԲԵՐՄԱ» ՓԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

Այնուհետև հայցի հիմքը և առարկան լրացվել է նաև հետևյալ կերպ.

Անհամապատասխանությունները հայտնաբերվել և արձանագրել են գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ՝ 24.03.2026 թվականին, իսկ պատասխանողի կողմից ներկայացված ապացույցներից պարզ է դառնում, որ թեև ծանուցումը հայցվորի կողմից չի ստացվել, սակայն այն, ըստ պատասխանողի կողմից ներկայացված ապացույցների, ուղարկվել է մասնակցին միայն 25.03.2026 թվականին՝ Կարգով սահմանված ժամկետի ավարտից հետո, ըստ էության խախտելով Կարգի 41-րդ կետի դրույթները:

Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 330-րդ հոդվածը նշել է, որ՝ երբ հայտում անհամապատասխանությունները հայտնաբերվել են սույն թվականի մարտի 24-ին և արձանագրվել են նույն օրը՝ թիվ 3 արձանագրությամբ, Հանձնաժողովի քարտուղարը, ըստ Կարգի, պարտավոր էր նույն օրը՝ 24.03.2026 թվականին ծանուցել մասնակցին՝ առաջարկելով շտկել դրանք:

Սույն պարագայում Պատասխանողի կողմից ներկայացված ապացույցներից պարզ է դառնում, որ Ծրկման մասին ծանուցումը մասնակցին ուղարկվել է միայն 25.03.2026 թվականին՝ Կարգով սահմանված ժամկետի խախտմամբ: Այսինքն Հանձնաժողովը բաց է թողել գործողություն կատարելու համար Կարգով սահմանված ժամկետը, ուստի նրա հետագա գործողությունները ևս եղել են ոչ իրավաչափ:

Պատասխանողի կողմից 13.04.2026 թվականին ներկայացված հայցադիմումի պատասխանին կից որպես ապացույց ներկայացված «8 ապացույց էլ փոստի.png» ապացույցը չի կարող համարվել վերաբերելի և թույլատրելի ապացույց, քանզի պարզ չէ, թե ի՞նչ առնչություն ունի այն սույն գործի փաստական հանգամանքների հետ: Արտատպվածքից երևում է, որ «subvencia subvencia» օգտատիրոջ (չնույնականացված օգտատեր) կողմից «bermamasis@yandex.ru» էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկվել «File.PDF» վերտառությամբ փաստաթուղթ: Հաշվի առնելով, որ արտատպվածքում չի երևում ուղարկված փաստաթղթին կից որևէ գրություն և փաստաթղթի անվանումից էլ պարզ չէ, թե ինչի վերաբերյալ է այն, հանգում ենք այն եզրակացությանը, որ տվյալ ապացույցով չի ապացուցվում այն հանգամանքը, որ Հայցվորը ծանուցվել է Պատասխանողի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով:

Հավելենք նաև, որ Պատասխանողը 30.03.2026 թվականին թիվ Ե-1745 գրությամբ դիմել է «Էվոկաբանկ» ԲԲԸ-ին՝ պահանջելով Հայցվորի կողմից հայտով որպես հայտի ապահովում ներկայացված 16.03.2026 թվականին «Էվոկաբանկ» ԲԲԸ-ի կողմից թողարկված թիվ 720/27, 721/27 և 722/27 բանկային երաշխիքներով սահմանված գումարը (հայտի ապահովում) վճարել Պատասխանողին, որպես հիմք ներկայացնելով Հանձնաժողովի թիվ 4 արձանագրությունը:

07.04.2026 թվականին «Էվոկաբանկ» ԲԲԸ-ն Պատասխանողին է փոխանցել 26,042,850 ՀՀ դրամ՝ որպես թիվ 720/27, 721/27 և 722/27 բանկային երաշխիքներով սահմանված հայտի ապահովման գումար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործի շրջանակներում Հայցվորի կողմից վիճարկվում է Գնահատող հանձնաժողովի կողմից 27.03.2026թ. կազմված թիվ 4 արձանագրության իրավաչափությունը և որ հայտի ապահովման բանկային երաշխիքներով սահմանված գումարի վճարման հիմքում ընկած է նույն որոշումը, պարզ է դառնում, որ վերոնշյալ արձանագրությունն անվավեր ճանաչվելու պարագայում «Էվոկաբանկ» ԲԲԸ-ի կողմից կատարված վճարումը դառնալու է ոչ իրավաչափ, ուստի գտնում ենք, որ սույն գործի շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել ներկայացված հայցի առարկան լրացնելու:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, խնդրել է հայցը դիտարկել հայցադիմումով և սույն միջնորդությամբ ներկայացված հիմքերով և ներքոնշյալ վերջնական պահանջով.

Անվավեր ճանաչել (վերացնել) Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի և բնակավայրերի փողոցների նորոգման ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2026 թվականի «փետրվարի» «13» «1» որոշմամբ հայտարարված թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-26/28» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 4 արձանագրությամբ կայացված «ԲԵՐՄԱ» ՓԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը: Որպես հետևանք՝ Արտաշատի համայնքապետարանից հօգուտ «Բերմա» ՓԲԸ-ի վերադարձնել թիվ 720/27, 721/27 և 722/27 բանկային երաշխիքներով սահմանված հայտի ապահովում հանդիսացող 26.042.850 ՀՀ դրամ գումարը՝ որպես սույն ընթացակարգի շրջանակներում Հայցվորից գանձված գումար:

## <u>3. Պատասխանողի դիրքորոշման հակիրճ բովանդակությունը.</u>

Պատասխանողը հայցադիմումի պատասխան է ներկայացրել Դատարան՝ նշելով, որ Պատասխանողը չի ընդունում ներկայացված հայցապահանջը և գտնում է, որ այն ամբողջությամբ ենթակա է մերժման՝ դրա ակնհայտ անհիմն լինելու պատճառով:

Հայցադիմումը չի պարունակում որևէ այնպիսի իրավական կամ փաստական հիմնավորում, որը կարող է վկայել պատասխանողի կողմից օրենքի խախտման մասին: Ընդհակառակը, գործի նյութերը միանշանակ ապացուցում են, որ՝ գնահատող հանձնաժողովը գործել է ՀՀ օրենսդրության պահանջներին լիովին համապատասխան, «ԲԵՐՄԱ» ՓԲԸ-ի հայտը չի համապատասխանել հրավերով սահմանված պարտադիր պահանջներին, կայացված որոշումը հանդիսացել է պարտադիր իրավական հետևանք, այլ ոչ թե հայեցողական գործողություն: Հատկանշական է, որ հայցվորը չի վիճարկում գործի առանցքային հանգամանքը, այն է՝ իր հայտում բացակայել է պարտադիր պահանջվող լիցենզիայի ներդիրը (առնվազն 2-րդ դաս շինարարության իրականացում ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելորացիա) ներդիրը:

Այս պայմաններում հայցվորի մնացած բոլոր փաստարկները կրում են երկրորդական և ձևական բնույթ և չեն կարող որևէ կերպ ազդել գործի իրավական գնահատականի վրա:

Գործի նյութերով հաստատվում է, որ՝ «ԲԵՐՄԱ» ՓԲԸ-ն մասնակցել է գնման ընթացակարգին (չափաբաժիններ 2, 3 և 8), սակայն չի ներկայացրել հրավերով պարտադիր պահանջվող լիցենզիայի ներդիրը, նշված հանգամանքը արձանագրվել է գնահատող հանձնաժողովի կողմից 24.03.2026թ. թիվ 3 արձանագրությամբ:

Այնուհետև վկայակոչելով՝ ՀՀ «Գնումների մասին» օրենքի 34-րդ

հեդվածը, Կարգի 41-րդ կարգը նշել է, որ Պատասխանողը լիովին պահպանել է նշված պահանջները. գնահատող հանձնաժողովը կասեցրել է նիստը, «ԲԵՐՄԱ» ՓԲԸ-ին տրամադրել է շտկման հնարավորություն, 25.03.2026թ. ծանուցումը ուղարկվել է ինչպես www.armeps.am համակարգով, այնպես էլ էլեկտրոնային փոստով: Անկախ նրանից՝ մասնակիցը փաստացի ծանոթացել է, թե ոչ, մասնակիցը պարտավոր է պարբերաբար հետևել համակարգին: Էլեկտրոնային գնումների համակարգով ծանուցումը համարվում է պատշաճ՝ անկախ դրա փաստացի ընթերցումից: Սա բխում է նաև իրավունքի ընդհանուր սկզբունքներից՝ բարեխղճության, ողջամիտ զգուշավորության և իրավահարաբերություններում ակտիվ վարքագծի պարտականությունից: Ըստ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի www.minurban.am պաշտոնեական կայքի 2026 թվականի ապրիլի 13-ի դրությամբ Բերմա ՓԲԸ-ն չունի նշված լիցենզիայի ներդիր:

Այնուհետև վկայակոչելով՝ Կարգի 42-րդ կետը նշել է, որ՝ Հայցվորի պնդումը, թե թիվ 4 արձանագրությունը չի հրապարակվել, անհիմն է՝ նիստը տեղի է ունեցել 27.03.2026թ., արձանագրությունը հրապարակվել է հաջորդ աշխատանքային օրը՝ 30.03.2026թ., 28.03.2026թ. հանդիսանում է ոչ աշխատանքային օր: Բացի այդ, դատական կայուն պրակտիկայի համաձայն՝ ընթացակարգային խախտումը կարող է հիմք հանդիսանալ վարչական ակտի անվավերության համար միայն այն դեպքում, եթե այն ազդել է գործի ելքի վրա: Տվյալ դեպքում՝ հայտը չի համապատասխանել պարտադիր պահանջներին, հետևաբար արդյունքը որևէ պարագայում չէր կարող փոփոխվել:

Հավասարության, մրցակցության և սահմանադրական սկզբունքների վերաբերյալ Հայցվորը սխալ է մեկնաբանում հավասարության սկզբունքը: Իրականում՝ հավասարությունը նշանակում է բոլոր մասնակիցների նկատմամբ նույն պահանջների կիրառություն,ոչ թե անհամապատասխան հայտերի ընդունում: Հակառակ մոտեցումը կխախտեր մրցակցության սկզբունքը և մյուս մասնակիցների իրավունքները:

Այնուհետև վկայակոչելով՝ ՀՀ Սահմանադրության 59-րդ, 78-րդ, ՀՀ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածները նշել է, որ՝ որ հայցվորի հայտը չի համապատասխանել պարտադիր պահանջներին, գնահատող հանձնաժողովը գործել է օրենքի պահանջներին խիստ համապատասխան, մերժումը եղել է պարտադիր և իրավաչափ, հայցվորի ներկայացված բոլոր փաստարկները չեն կարող ազդել գործի ելքի վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրել է հայցը մերժել:

**<u>4.Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը.</u>**

**1)** ՀՀ Արարատ մարզի Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-26/28» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.03.2026թ. հայտերի գնահատման նիստի թիվ 3

արձանագրության 2.3 կետով սահմանվել է, որ Բերմա ՓԲԸ-ի ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ առնվազն 2-րդ դաս շինարարության իրականացում ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա) ներդիրի:

Արդյունքում հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ. 526-Ն որոշման 41-րդ կետը որոշել է գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել և մասնակիցներին ծանուցել առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում մինչև նիստի կասեցման ավարտը շտկել անհամապատասխանությունները:

**2)** «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-26/28» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից <<Բերմա>> ՓԲԸ-ին 25.03.2026թ. հասցեագրված գրությամբ նշվել է հետևյալը.

Հայտնում ենք ձեզ, որ Արտաշատի համայնքապետարանի կարիքների նպատակով հայտարարված «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-26/28» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի Ձեր կողմից ներկայացված հայտում կան անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

Մասնավորապես` չեք ներկայացրել առնվազն 2-րդ դաս շինության իրականացում ջրամատակարարում  և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա) ներդիրի:

Առաջարկում ենք Ձեզ մեկ աշխատանքային օրվա ընթացքում մինչև գնահատող հանձնաժողովի նիստի կասեցման ավարտը շտկել անհամապատասխանությունները:

**3)** ՀՀ Արարատ մարզի Արտաշատի համայնքապետարնի կարիքների համար «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-26/28» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2026թ. հայտերի գնահատման նիստի թիվ 4 արձանագրության 2.7 կետով արձանագրվել է, որ <<Բերմա>> ՓԲԸ-ն չի շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

Արդյունքում հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ. 526-Ն որոշման 42-րդ կետի հիմքով <<Բերմա>> ՓԲԸ-ի հայտը թիվ 2, 3, 8 չափաբաժինների մասով գնահատել է անբավարար և մերժել է:

Միաժամանակ, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ. 526-Ն որոշման 32-րդ կետի 19-րդ ենթակետով, հրավերի 1-ին մասի 8.14 կետով, հիմք ընդունելով <<Բերմա>> ՓԲԸ-ի կողմից չշտկված հայտը, նշված հիմքով մասնակցի` Բերմա ՓԲԸ-ի կողմից նշված հանգամանքը համարվել է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնած պարտավորությունների խախտում:

**5. Կիրառելի իրավունքը, Դատարանի իրավական վերլուծությունները և եզրահանգումը.**

Գործում առկա յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, Դատարանը գալիս է հետևյալ եզրահանգմանը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը կազմված է սույն օրենսգրքից և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքներից:

Այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման: (...)

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանության իրավունքը, իրականացնում են իրենց հայեցողությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հրաժարվելն իրենց իրավունքներն իրականացնելուց չի հանգեցնում այդ իրավունքների դադարման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է՝

1) իրավունքը ճանաչելով.

2) մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելով.

3) իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխելով.

4) առոչինչ գործարքի անվավերության հետևանքները կիրառելով.

5) վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելով և դրա անվավերության հետևանքները կիրառելով.

6) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտն անվավեր ճանաչելով.

7) դատարանի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին հակասող ակտը չկիրառելով.

8) իրավունքի ինքնապաշտպանությամբ.

9) պարտականությունը բնեղենով կատարելուն հարկադրելով.

10) վնասներ հատուցելով.

11) տուժանք բռնագանձելով.

12) իրավահարաբերությունը դադարեցնելով կամ փոփոխելով.

13) օրենքով նախատեսված այլ եղանակներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածի համաձայն՝ գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) պատվիրատու՝

ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետության կամ համայնքների հիմնարկներ,

բ. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,

գ. պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ,

դ. պետության կամ համայնքների՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններ,

ե. պետության կամ համայնքի կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կամ պետության կամ համայնքների՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից ստեղծված հիմնադրամներ կամ ձևավորված միավորումներ (միություններ),

զ. պետությունից կամ համայնքից կամ պետական կամ համայնքային ոչ առևտրային կամ պետության կամ համայնքների՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններից նվիրաբերության կամ դրամաշնորհի կարգով միջոցներ ստացած իրավաբանական անձինք՝ նվիրաբերության կամ դրամաշնորհի կարգով ստացված միջոցների հաշվին կատարվող գնումների մասով,

է. պետական կամ համայնքային ոչ առևտրային կամ պետության կամ համայնքների՝ հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների վերակազմակերպման միջոցով վերակազմավորված հիմնադրամներ,

ը. հանրային կազմակերպություններ.

(...)

5) մասնակից՝ պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակցող անձ.

6) ընտրված մասնակից՝ մասնակից (մասնակիցներ), որին (որոնց) պատվիրատուն առաջարկում է կնքել պայմանագիր.

7) հրավեր՝ պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմաններ.

8) հայտ՝ հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկ.

(...)

23) գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը.

(...)

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի

ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով, որը՝

1) հաստատում է հայտարարության և հրավերի տեքստերը.

2) փոփոխություններ է կատարում հրավերում.

3) պարզաբանումներ է ներկայացնում գնման ընթացակարգի վերաբերյալ.

4) բացում և գնահատում է հայտերը.

5) որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին).

6) գնման ընթացակարգը հայտարարում է չկայացած:

Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում են՝ տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ:

Օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝ տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Ընտրված մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

(...)

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

(...)

8. Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

9. Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:

<<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ

կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատվել է նաև գնումների գործընթացի կազմակերպման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի (այսուհետ նաև՝ Կարգ):

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է

տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:

Վերոնշյալ նորմերի բովանդակությունից հետևում է, որ մրցույթը հանդիսանում է գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու համար մասնակիցները, պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմանների (հրավերի) հիման վրա, օրենքով սահմանված կարգով առաջարկներ (հայտեր, որին ի թիվս այլնի հրավերով նախատեսված դեպքերում, կից ներկայացվում է հայտի ապահովումը) են ներկայացնում, որոնք հրավերով սահմանված կարգով ենթակա են գնահատման պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի կողմից:

Մասնավորապես, հայտերը բացվում և գնահատվում են հանձնաժողովի նիստում, որի ժամանակ հրապարակվում է գնման հայտով սահմանված գնման գինը, գնահատվում են հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին, և հայտարարվում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները: Ընդ որում, բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին/պահանջներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը բողոքարկելու գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները:

Գնումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կատարած գործողության կամ անգործության հետևանքով պատճառված վնասները հատուցվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

(...)

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծությունից բխում է, որ գնման գործընթացում միմյանցից տարանջատվել են պատվիրատուն և գնահատող հանձնաժողովը և առանձին վերցրած հնարավորություն է տրվել բողոքարկել վերջիններիս կողմից կատարված  գործողությունները (անգործությունը) և կայացված որոշումները, ավելին՝ հրավերում և պայմանագրում հիմնական պայմանների ներառման, ինչպես նաև գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատվիրատուների համար սահմանված պահանջների կատարման պատասխանատվությունը կրում է պատվիրատուն, իսկ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը:

Վերոգրյալի հիման վրա՝ անդրադառնալով քաղաքացիական գործին, Դատարանը ցանկանում է նշել, որ ՀՀ Արարատ մարզի Արտաշատի համայնքապետարնի կարիքների համար «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-26/28» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.03.2026թ. հայտերի գնահատման նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետով սահմանվել է, որ Բերմա ՓԲԸ-ի ներկայացված հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ առնվազն 2-րդ դաս շինարարության իրականացում ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելորացիա) ներդիրի:

Արդյունքում հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ. 526-Ն որոշման 41-րդ կետը որոշել է գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել և մասնակիցներին ծանուցել առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում մինչև նիստի կասեցման ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Միաժամանակ, «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-26/28» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից <<Բերմա>> ՓԲԸ-ին 25.03.2026թ. հասցեագրված գրությամբ նշվել է հետևյալը.

<<Հայտնում ենք ձեզ, որ Արտաշատի համայնքապետարանի կարիքների նպատակով հայտարարված «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-26/28» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի Ձեր կողմից ներկայացված հայտում կան անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

Մասնավորապես՝ չեք ներկայացրել առնվազն 2-րդ դաս շինության իրականացում ջրամատակարարում  և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելորացիա) ներդիրի:

Առաջարկում ենք Ձեզ մեկ աշխատանքային օրվա ընթացքում մինչև գնահատող հանձնաժողովի նիստի կասեցման ավարտը շտկել անհամապատասխանությունները:>>:

Դատարանը կարևորում է նաև այն, որ էլեկտրոնային նամակագրության վերաբերյալ ներկայացված քաղվածից հետևում է, որ Հայցվորին հասցեագրվել է հիշյալ գրությունը՝ այն նույն էլեկտրոնային հասցեով, որը որպես Հայցվորի էլեկտրոնային հասցե նշվել է հայցադիմումում, իսկ ինչ վերաբերում է տվյալ նամակագրությամբ ուղարկված կից փաստաթղթի բովանդակությանը, ապա Դատարանը նկատի ունենալով «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-26/28» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից <<Բերմա>> ՓԲԸ-ին 25.03.2026թ. հասցեագրված վերը նշված գրությունը, որով նշվել է հայտում առկա անհամապատասխանությունների և դրանք շտկելու իրավունքի իրագործման մասին, և հիշատակված ապացույցները գնահատելով համակցության մեջ, Դատարանը հանգում է այն եզրակացության, որ նշված փաստաթուղթն ուղարկվել է Հայցվորին, ուստի քննարկվող մասով հայցվոր կողմի դիրքորոշումը հիմնավոր չի համարում:

Ինչ վերաբերում է նշված նիստի կասեցման ժամկետների վերաբերյալ դիտարկումներին, ապա Դատարանը ցանկանում է նշել, որ ամեն դեպքում Հայցվորին տրվել է թերությունը շտկելու հնարավորություն, քանի որ նշված գրությունն ուղարկվել է 25.03.2026թ. և առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը և հաջորդ նիստ հրավիրվել է արդեն 27.03.2025թ., ուստի ընթացակարգը գնահատող հանձնաժողովի նիստերի ժամանակահատվածին վերաբերող փաստարկները չեն կարող հիմք հանդիսանալ հայցը բավարարելու համար, քանի որ վկայակոչված գործողությունների արդյունքում հնարավոր չէ արձանագրել որևէ փաստ, որ նշված գործողությունները հիշյալ ժամկետներում կատարելու արդյունքում խախտվել է Հայցվորի որևէ իրավունք:

Հետևաբար Դատարանը հիմնավոր չի համարում քննարկվող հարցի վերաբերյալ հայցվոր կողմի դիրքորոշումը:

Միաժամանակ, Դատարանն արձանագրում է, որ ՀՀ Արարատ մարզի Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-26/28» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2026թ. հայտերի գնահատման նիստի թիվ 4 արձանագրության 2.7 կետով արձանագրվել է, որ <<Բերմա>> ՓԲԸ-ն չի շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

Արդյունքում հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ. 526-Ն որոշման 42-րդ կետի հիմքով <<Բերմա>> ՓԲԸ-ի հայտը թիվ 2, 3, 8 չափաբաժինների մասով գնահատել է անբավարար և մերժել է:

Միաժամանակ, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ. 526-Ն որոշման 32-րդ կետի 19-րդ ենթակետով, հրավերի 1-ին մասի 8.14 կետով, հիմք ընդունելով <<Բերմա>> ՓԲԸ-ի կողմից չշտկված հայտը, նշված հիմքով մասնակցի՝ Բերմա ՓԲԸ-ի կողմից նշված հանգամանքը համարվել է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնած պարտավորությունների խախտում:

Տվյալ դեպքում, անդրադառնալով նշվածը տեղեկագրում հրապարկված

չլինելու հայցվոր կողմի դիտարկումներին, Դատարանը ցանկանում է նշել, որ https://gnumner.minfin.am/ կայքում թիվ ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-26/28 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ առկա տեղեկություններից հետևում է, որ 27.03.2026թ. նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարակվել է 30.03.2026թ.: Միաժամանակ Դատարանն արձանագրում է, որ այս տարվա մարտ ամսվա 28-29-րդ օրերը եղել են ոչ աշխատանքային օրեր և հիշյալ արձանագրությանը կայացման օրվան հաջորդող 1-ին աշխատանքային օրը եղել է 30.03.2026թ., ուստի քննարկվող հարցի վերաբերյալ հայցվոր կողմի փաստարկները ևս Դատարանը հիմնավոր չի համարում, քանի որ Պատասխանողի գործողություններն իրավաչափ են:

Վերոգրյալի լույսի ներքո՝ Դատարանը ցանկանում է նշել, որ հայցը Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի և բնակավայրերի փողոցների նորոգման ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով 2026 թվականի «փետրվարի» «13» «1» որոշմամբ հայտարարված թիվ «ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-26/28» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 4 արձանագրությամբ կայացված «ԲԵՐՄԱ» ՓԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու մասով ենթակա է մերժման, ինչի պայմաններում գտնում է, որ անվավերության հետևանքների կիրառման մասով ևս հայցը ենթակա է մերժման, քանի որ անվավերության հետևանքների կիրառումն ուղղակիորեն բխում է հիմնական հայցապահանջի բավարարումից, ուստի հիմնական հայցապահանջի մերժումը հանգեցնում է նաև ածանցյալ պահանջի մերժմանը, ուստի Դատարանը մյուս ապացույցների գնահատմանը չի անդրադառնում, քանի որ դրանք կարող էին վեճի լուծման տեսանկյունից ունենալ նշանակություն բացառապես այն դեպքում, երբ հայցապահանջը հիմնական պահանջի մասով ենթակա լիներ բավարարման:

Արդյունքում Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է մերժման:

Միաժամանակ, Դատարանն անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, իսկ հայցվոր ընկերության կողմից վճարվել է անհրաժեշտ չափով պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի

198-րդ հոդվածով, Դատարանը.

**Վ Ճ Ռ Ե Ց**

Հայց մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ՝**

**Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Digitally signed by GRIGORYAN TIGRAN 4008820477
Date: 2026.04.29 09:21:06 AMT

*Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE89-8581-459D-AD2D հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:*

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*